III.

Վերև յիշուած փաստերը բաւական են ապացուցանելու, թէ մեր սուրբ հայրերն ինչ եռանդով էին կռուում ժողովրդական այն սովորութիւնների դէմ, որոնք հեթանոսական ժամանակից 'ի վեր մնում էին, մանաւանդ ազգաբնակութեան սորին խաւերում, իբրև ամուսնութեան մի անհրաժեշտ միջոց։ Անտարակոյս՝ դարերի ընթացքում գործադրած խիստ պատժական միջոցները մի կողմից և քրիստոնէական ոգու տակ մնուած բարքերը միւս կողմից, քայլ առ քայլ պէտք է նուազեցնէին առևանգման սովորութիւնները։ Յիրաւի՝ կարծես սուրբ հայրերը մասամբ հասել էին իրենց նպատակին։ Առևանգումն, իբրև ամուսնութեան անհրաժեշտ մի եղանակ, միանգամայն վերացաւ հայկական սովորութական իրաւունքից. սակայն նրա հետքերը դեռևս չեն չքացել։ Կարծես այդ հին սովորութիւնն երբեմն այս ու այնտեղ, որպէս բնազդային ոյժ յարութիւն է առնում ժողովրդի բարքերի մէջ ու յիշեցնել է տալիս հարս գրաւելու այն դիւրին, բայց և համարձակ միջոցը, որ «իգիթ» ու անվեհեր պատանիների գործ կարող էր լինել։ Դեռ ևս XIX դարու վերջերում գտնում ենք հայ ժողովրդի բարքերում առևանգման հատ հատ դէպքեր, որոնք թէև այլևս չեն կարող մեզ իբրև փաստ ծառայել, որ այսօր էլ առևանգումն իրականապէս կազմում է սովորութական իրաւունքի կարգերից մէկը, բայց և այնպէս՝ ապացուցանում են, որ այդ բնազդը միանգամայն արմատախիլ չի եղել ժողովրդի կեանքից։ Առաջ բերենք մի քանի փաստեր։

«Հարս փախցնելու սովորութիւնը դեռ ևս գոյութիւն ունի Ախալցխայի գաւառի հայերի մէջ. սակայն այդ չի կարելի համարել իբրև տեղական կեանքի ստէպ կրկնուող մի երևոյթ։ Առևանգումն՝ աղջկայ կամքին հակառակ՝ զրեթէ բնաւ տեղի չի ունենում, այլ սովորաբար առևանգուողը խօսք է կապում իւր փախցնողի հետ։ Առևանգման